

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն



ՀԱՅ ԵՐԵՒԵԼԻՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ, ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ
ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵԻՆ, ԵԻՆ.

1512-1912

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ



ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՔԵՂ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԻ



Կ Ա Ջ Մ Ե Ց

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ



ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ՊՐԱԿ Ի.Ե. (27)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

128.	Յարութիւն Քին. Շմաւոնեան (Շար.)	2	Պատկեր
	Ազա Յովհաննէս Բաբիկեան	2	,
129.	Եղիազար Մուրաշեան	3	,
131.	Մատթիա Ա. Գարազաւեան	1	,
132.	Միխայիլ Վրդ. Զամչեան	1	,
133.	Յակոբ Վարժապէտ Կարինեանց	3	,

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Վ. ԵՆ Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐՔ
Կ. ՊՈՂԻՍ

ՏՊԳՐ. ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1912



Մատթիա Ա. Գարազաւեան

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն



ՀԱՅ ԵՐԵՒԵԼԻՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ, ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ
ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵԻՆ, ԵԻՆ.

1512-1912

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ



ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՔԵՂ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԻ



Կ Ա Ջ Մ Ե Ց

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ



ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ՊՐԱԿ Ի.Է. (27)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

128.	Յարուբիւն Քին. Շմաւոնեան (Շար.)	2	Պատկեր
	Ազա Յովհաննէս Բաբիկեան	2	,
129.	Եղիազար Մուրաշեան	3	,
131.	Մատթիա Ա. Գարազաւեան	1	,
132.	Միխայէլ Վրդ. Զամչեան	1	,
133.	Յակոբ Վարժապէտ Կարինեանց	3	,

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ


Վ. ԵՆ Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐՔ
Կ. ՊՈՂԻՍ

ՏՊԳՐ. ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1912




Մատթիա Ա. Գարազաւեան



317.— Յարուբիւն Քահանայ Շմառնեան

բապեաներով որուն կեդրոնը կը գտնուի Շմառնեանի պատկերը, այդ պատկերը իրենց բարեհաճ արտօնութեամբ պիտի նրատարակենք յիշատակարանի երրորդ նատորի աւարաման երկու մեծագիր էջերու վրայ:

ԱՂԲԻՒՐՆԵՐ. — Պատմ. հայ յրագրութեան Հ. Գալիսեանեան.— Հայոց պարբերական մամուլը Լեռնեանց.— Պատմ. Հայկ. Տպագրութեան Լեռ Բ. հատր 1902:



ԱՂԱ ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ԲԱԲԻԿԵԱՆ

Հարիւր քառասուն տարի մը կայ՝ նոյնատական նսկայ եռակայմ մը զարնուրելի փոթորիկի մը կը բռնուի Սինկարուրէն անդին՝ երբ կը պատրաստուէր Բարեյուսոյ Գլխուն ճամբով Ատլանտեան Ովկիանոս անցնիլ՝ եւրոպական նաւահանգիստ մը մտնելու համար:

Եռակայմը անազին քանակութեամբ ապրանք առած էր Կալկաթայէն, մասնաւորաբար նոզիկ կերպաններու անհամար ծրարներ, որոնք եւրոպայի միջնորդներու ձեռքով Արևելք պիտի զրկուէին: Ժամանակին սովորութեան համա-

ձայն, շատ վաճառականներ իրենց ապրանքին ընկերացած էին և հանդարտիկ ողջունած Սուլմադրայի ծիծղուն նաւահանգիստը ուրկէ մեծ թուով հոլանտայի ընտանիքներ նաւ մտած էին՝ ուղղակի Եւրոպա երթալու համար:

Նաւապետի՞ն անճարակութենէն թէ փոթորկին սաստկութենէն՝ յայտնի չէ՝ անա՛նկ կը պատահի որ եռակայմը իր ճամբան կորսնցնէ, և փոխանակ Բարեյուսոյ հրուանդանը ուղղուելու՝ մոլորի դէպի Խաղաղական՝ և այդ անսահման ովկիանոսին վրայ ա՛լ աւելի արհաւրագին

փոթորիկի մը մատնուի : Նաւաբեկութեան ման-
րամասնութիւններէն շատ բան յայտնի չէ , բայց
գոնէ կա՛յ նամակի ծուէն մը , — միակ վաւե-
րագիրը այդ սոսկալի անցքին , — որ հետեւեալ
տեղեկութիւնները կուտայ փոթորկին նկատ-
մամբ . —

« Այլք զայեօք կուտակէին , ամբարձեալ գեր ի վեր մին-
չեւ կարծել ամբարտակ լինել նոցա երկնից : Եւ տատանէր
եռակայմն անդադար իբրև զփետուր մատնեալ ի յաղթ
յորձանս Ողիմպեայ , և ջուրք ի նաւն կոյս տային գրոհ ,
աւել ածեալ ի տախտակամածին , և վարէին զոր դիպէին
բռնութեան ծփանաց նոցա , շունչ կենդանի և ազմամաղիս
Եւ որ ի չարաբաստիկ նաւաբեկելոցն գար արտաքս վայելն ,
զօրագոյն էր բան զողբ և զկոծ որոց ի հուր դժոխոց տուայ-
տէին եղկելի մեղաւորք : Հատեալ էր յոյս ի մէնջ և առ
կուան համարէաք զկորուստ , զի չէր երկիր որ փրկէր , և
կորուսեալ էաք զգէճ ուղւոյն » :



318.— Աղա Յովհաննէս Բարիկեան

Այս յուղիչ առկերը գրողը նոր Զուղայեցի
Հայ վաճառական մըն էր , Աղա Յովհաննէս
Բարիկեան որ իր բովանդակ հարստութիւնը
աֆիոնի վերածած էր և այդ միեւնոյն եռակայ-
մով Եւրոպա կ'ուղեւորէր հսկայ շահերու յոյսով :
Բարձրահասակ ու նիհար մարդ մըն էր , արտա-
կարգ կամքի ոյժով մը օժտուած , ուսեալ և
առաքինի , աստուածավախ ու բարեգործ , —
ինչպէս վկայած են իր ժամանակակիցները : Իր
բարեգործութիւնները դժբաղդաբար անյայտ կը

մնան մեզի . սա միայն ծանօթ է թէ ինք եղած
է մեծագոյն մեկենասը Վենետիկի Մխիթարեանց
այն հատուածին՝ որ մայր վանքէն բաժնուելով
Թրիէսդ գնաց և վանք ու տպարան հիմնեց
այնտեղ : Այդ Մխիթարեաններէն մէկը՝ Հ. Մի-
նաս Գասպարեանց՝ անձամբ տարփողած է նոր
Զուղայեցի վաճառականին բարեմասնութիւն-
ները , վկայելով թէ « այր էր պատուական ,
բարեսէր , բարերար առ ամենեսին և անչափ նա-
խանձայոյզ պայծառութեան զարմին իւրոյ » :

Աւանդաբար կը պատմեն թէ փոթորկին ըն-
թացքին , եռակայմին անյոյս նաւաբեկեալներէն
ի՛նք միայն պաղարիւն մնացած էր , և նոյն իսկ
նաւապետին շլմորած ու շփոթ վայրկեաններուն
մէջ յաջողած էր ամէնքը հանդարտեցնել տեսակ
մը ճարտար հնարքով , որ պատուական ստրայոյց
մըն է որչա՛փ իր հոգեկան կորովին՝ այնքան
նաև իր անսովոր մտայնութեան :

Փոթորկին ամէնէն սաստկացած մէկ սու-
տուն՝ նաւապետը կը կանչէ վաճառականները
և անոնց կ'իմացնէ թէ՛ նաւին ջուր առնելուն
պատճառաւ պիտի ստիպուի թշուր բեռները ծովը
թափել :

— Բայց ո՞ւր կը գանուինք , ո՞ւր կը դի-
մենք , կը հարցնեն մէկ քանին :

— Չեմ գիտեր թէ ո՞ւր կը գանուինք , չեմ
գիտեր նաև թէ ո՞ւր կը դիմենք , որովհետև
ամէն դործիք խորտակուած ու աւրուած է ար-
դէն , կը պատասխանէ նաւապետը :

— Բայց վերջապէս տեղ մը պիտի հասնինք ,
վրայ կուտան միւսները :

— Անչուշտ պիտի հասնինք , պայմանաւ
սակայն , որ նախապէս նաւը վրկենք , և ասոր
համար անհրաժեշտ է բեռները նետել :

Եւ աւելի համոզիչ դառնալու համար՝ նա-
ւապետը ցոյց կուտայ եռակայմին յետապագայ
հաւաքուած խումբ մը կիներ , — որոնք իրենց
զաւակները կուրծքերնուն վրայ սեղմած՝ ահ-
ուելի վայնաստուններով դէժ կը բռնէին փոթոր-
կին կանչերուն , — ու կը յարէ .

— Եթէ ձեր կեանքը ձեզի համար արժէք
չունի՝ զոնէ սա խեղճերը մեղքեցէք . . .

×

Աղա Բարիկեան անխօս վկան եղած էր այդ
խօսակցութեան : Ինք ալ գիտէր որ նաւապետը
իրաւունք ունի , բայց եթէ բեռները իսկապէս
ծովը թափէին՝ իր ամբողջ հարստութիւնը վրայ

պիտի երթար, և անկէ անդին՝ յայտնի չէր թէ պիտի կրնար կրկին վերականգնիլ: Յետոյ՝ ինք տակաւին յուսալից էր. նախազգացում մը իրեն կ'ըսէր թէ պիտի փրկուին, և նոյն իսկ մօտ ատենէն, թերեւս այդ օրն իսկ, թերեւս քանի մը ժամէն: Պէտք էր միայն ճար մը գտնել՝ նաւապետին որոշումը գոնէ օր մը յետաձգելու համար, և ինք պէտք եղածէն աւելի հնարամիտ էր ու կրնար միջոց մը խորհիլ:

Երբոր միւս վաճառականները կուգան իր ալ կարծիքը իմանալու, ան արդէն իսկ գտած է հնարը ու կը պատասխանէ արհամարհոտ շեշտով մը:

— Ես աւելի մեծ գաղափար ունէի ձեր վրայ, չէի կարծեր որ անճարակ մարդու մը խօսքէն խաբուելու չափ միամիտ էք:

Միւսները՝ ապշութեամբ իրեն կը նային, չեն գիտեր թէ ի՞նչ պատասխանեն:

— Կը զարմանա՞ք, կը յարէ աղա Բարիկեանց, բայց դուք չէ՞ք հասկցեր տակաւին թէ այս հոլանտացին նաւապետութենէ բան չի հասկընար. այսքան օր կ'ընէ փոթորկին դիմացանք, և հիմայ որ փրկութիւնը մօտ է...

— Փրկութիւնը մօտ է, կը գոչեն բոլորը մէկ՝ գրեթէ միաբերան:

— Հապա... թող իր գործը ինձի յանձնէ այս օրն ու գիշերը, և վաղը ձեզ ցամաք կը հանեմ:

— Բայց դուն նաւապետութիւն գիտե՞ս...

— Ես նաւապետի զաւակ եմ, և ամբողջ կեանքս նաւերու մէջ անցուցեր եմ... ձեզի կ'ըսեմ որ վաղ առտու պիտի փրկուինք, և այդ անխելքը ելեր ապրանքները ծովը թափել կ'ուզէ...

Վաճառականները անմիջապէս կ'երթան կը գտնեն նաւապետը, ճար կ'ընեն՝ ճարակ կ'ընեն, կը համոզեն զայն, և նոյն օրն իսկ՝ տակաւին ցերեկ չեղած՝ աղա Բարիկեան կ'երթայ կը փակուի նաւապետին խուցը, ձեռքը առնելով նաւին հրամանատարութիւնը, որ արդէն ոչինչի վերածուած էր այդ սարսափի պահերուն մէջ, քանի որ նաւապետը մէկ բան միայն կրնար ընել ամենայն հրութեամբ համակերպիլ փոթորկին ստանալիք ուղղութեան:

Ի՞նչ կ'ընէ այդ օրը, ի՞նչպէս կ'անցընէ այդ գիշերը: Կրկին վերոյիշեալ նամակի ծուէնին կը դիմենք այս կէտը լուսաբանելու համար, —

« Զօրն ողջոյն և զգիշերն ողջոյն զմիով եւեթ էի պատահեալ, ի գուճս անկեալ յաղօթս կացի, չառեալ ինչ զկայ: Առ իմէ՞ ոչ սպառէր յոյս իմ. հաւատայի հանապազ զի փրկելոց է զմեզ Ամենակալն Աստուած, և մինչչեւ ծայրս արձակեալ արեգական՝ կայր մեզ ողջունել զերկիր: Եւ յա-

ՄԻՊԸՍԸՆՈՒԹԻՒՆ
ԵՄԵՐԻԿՈՅ:

Ըրարեալ ՚ի վարդապետէն կուչիէլմեայ
Ուպերթսօնէ:

ԵՒ
Բաժանեալ յո՛ւնն որպրտեալն:

[Սարգճանեալ նախ յանգլիական բնագրէ յատալական լեզու. և անտի ՚ի չայ բարբառ ՚ի չայր Սիւնաս Սարգսի վասպարեանց վարդապետաց ՚ի Սիւրանուիթէ բազմաժամակ բարեկեցատակ Սիւրթարց: Բարունապետի և Սեծի Ըրարցի:

ՆՆՏՈՐ ԵՐԿՐՈՐԻ:

Յոր յաւելաւ ՚ի վերջոյ համառօտ բացատրութի խրթին բառից, որք հանդիպին յայտասիկ երկուս հատորս:

Տղաքեալ ձախտի և արդեամբ Ռեթիլեանց Պարտէ (Յոհաննի) Չուպչեցոյ:

Յամի ան 1786. և ՚ի իմունին չայոց ու՛ղի:



Ի ԽՐԵՍՏ
Ի Տպարանի չարց Սիւրթարեանց:
Չրամուտս Սէժաորաց:

319. — Վիպասանութիւն Ամերիկոյ

ղօթս կացի անդադար, ապաւինեալ եւեթ ի հաւատս, և արդարեւ հաւատք ի փրկութիւն եղեն մեզ:»

Ինչպէ՞ս այս հրաշքը մեկնել մերինին պէս սկեպտիկ դարու մը մէջ: Նոյն գիշերը իսկապէս փոթորիկը կը դադրի, և առտուն՝ հազիւ լոյսը ցաթած՝ մշուշի մէջ թաղուած բայց յայտնապէս տեսանելի ցամաք մը կը նշմարուի հեռուէն:

— Ցամա՛ք, ցամա՛ք, կը գոռայ ամէն մարդ: Եռակայմը կը թնդայ ուրախութեան և հրրճուանքի աղաղակներով, վաճառականներ կուգան իրենց երախտիքը կը յայտնեն աղա Բարիկեանի, կը խոստանան իրենց ապրանքէն կարեւոր մաս մը իրեն նուիրել, ամօթահար նաւապետն ալ կուգայ ներում կը խնդրէ, նոյն իսկ

կիներ իրենց զարդոսկիներն ու գինդերը հանելով կը բերեն իր ոտուրներուն առջեւ կը սփռեն և իր ձեռքերը կը համբուրեն :

Ողջունուած ցամաքը Ամերիկան էր :

Աղա Բաբիկեանց կը մտարերէ որ իրմէ մօտաւորապէս երեք դար առաջ ալ ուրիշ մարդկային սիրտ մը նոյնքան անձկութեամբ լսած էր այդ « Յամա՛ք, ցամա՛ք » աղաղակը, կը խորհի որ եթէ Քրիստոսափոր Գոլոմպոս Ամերիկան գտած չըլլար՝ ողջունուած երկիրը ո՛չ միայն փրկութեան դուռ մը չպիտի ըլլար իրենց համար, այլ նոր թշուառութեանց և նոր չարչարանքներու աղբիւր մը պիտի դառնար. անսահման երախտագիտութիւն մը կը զգայ Ճենովայի նշանաւոր նաւորդին նկատմամբ, և կ'որոշէ առաջին առթիւ. անոր յիշատակը յաւերժացնել նաև իր ազգակիցներուն մէջ :

Հազիւ Եւրոպա անցած՝ իրեն բան գործ կ'ընէ Գոլոմպոսի վրայ գրուած լաւագոյն երկի մը հետախուզութիւնը, երկա՛ր ատեն կը փնտռէ

ու վերջապէս կը գտնէ Ուիլերմ Ռօպերթսընի քառահատոր մէկ գործը՝ զոր իրեն հետ Թրիքտոսանելով թարգմանել կուտայ Հ. Մինաս Վրդ. Գասպարեանցի (*): Ինք շինել կուտայ նաև Գոլոմպոսի ամենահաւատարիմ մէկ պատկերը որ Հ. Գասպարեանցի երկհատոր թարգմանութեան սկիզբը զետեղուած է, այդ գիրքին մէջ կը գտնենք նաև Աղա Յովհաննէս Բաբիկեանի կենդանագիրը ուրիշ առած ենք (Թիւ 318) :

ԱՂԲԻԻՐՆԵՐ.— Վիպասանոթիւն անկրիկոյ 1784.— Լոյս 1908 էջ 378 (Արար Անտ'եան):

(*) «Վիպասանութիւն Ամերիկոյ», Արարեալ 'ի վարդապետէն կու յիշմեայ Ռօպերթսընէ եւ բաժանեալ յաթն դարութիւնս թարգմանեալ նախ յանգլիական բնագրէ յիտալական լեզու, և անտի 'ի Հայ բարբառ 'ի Հայր Մինաս Վարդապետէ Գասպարեանց Արթիմեայ 'ի Միտրանութենէ բազմափաստակ բարեյիշատակ Միթիթարայ Բարունապետի եւ Մեծի Աբբայի Յամի Տեառն 1784, ի Թրիքտոս, ի տպարանի Հարց Միթիթարեանց:



ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ

1841-1891

Եղիազար Մուրատեան, բնիկ Վանեցի, Այգեաստան թաղէն, ծնած է 1841ին: 13 — 14 տարեկան հասակին, ուսման տենչէն մղուած կ. Պօլիս կուգայ և Ղալաթիոյ Ս. Փրկչեան Ճեմարանը կը մտնէ. որ այն ատեն կրթական ամէնէն փայլուն հաստատութիւնն էր գրեթէ :

Իր քոյրը, 3—4 տարու իրմէ մեծ, եղբօրը դէպի Պօլիս մեկնումէն օգուտ կը քաղէ, յորդորելու դայն որ Պօլսոյ մէջ դատի ձեռնարկէ ընդդէմ Հայ աղայի մը՝ նոյնպէս Վանեցի որ իրենց հօրենական կալուածները իւրացուցած էր, իրենց հօր կանխահաս մահուրնէ վերջ :

Պատանին Եղիազար, հազարումէկ դժուարանաց ենթարկուած՝ և աւելի իր ուսումով քան թէ դատով պարապելու յետամուտ, ի վեր-

ջոյ 50 ոսկուոյ փոխարէն իր մասին վաճառման հաւանութիւն կուտայ՝ իսկ քոյրը մինչեւ վերջ բողոքող կը մնայ և դասը կը շարունակէ թէև ապարդիւն :

Իր ուսանողութեան միջոցին՝ ապրուստի միջոցներէն զուրկ, Բինկեանցի Յարութիւն աղա Գասեանէ ամսական մէկ ոսկի կը ստանայ իբր օրապահիկ :

1862ին վկայական ստացած է 14 տկանաւոր անձնաւորութիւններու ստորագրութեամբ (տես թիւ 321) ընդ որս, Ներսէս Վարժապետեան, Մ. Մամուրեան եւն: Յրանսերէնի համար ունեցած է մասնաւոր դասատու մը, Յրանսացի մը որ այն ատեն կայս պալատին մէջ ուսուցիչ էր և որ յանձնարարութեան մը հետեւանօք ձրխարար

յօժարած էր դաս տալ՝ տեսնելով մանաւանդ պատանի Եղիազարի յաջողութիւնն: Հետեւելով ուսուցչական ասպարէզին երկար տարիներ դասախօսած է Գուդկունճուքի, Պէշիկթաշի, Օրթաղիւղի, Իւսկիւտարի ու Բերայի վարժարանաց մէջ և հիմնած է Իւսկիւտարի մէջ մասնաւոր վարժարան մը:

Իր դասախօսութեանց ճիւղերն էին. Հայերէն, Ֆրանսերէն, Գրագիտութիւն և Պատմութիւն: 1866ին առաջին անգամն ըրաւով մեր մէջ, գրագիտութեան դասագիրք մը յօրինած է: Յօրինած է նաեւ Հայերէն Գրագիտութեան ֆերականութիւն, Ֆրանս. Հայ. Բերականութիւն, Պատմութիւն Ընդհ. Ազգ. (անտիպ մնացած) Ճարտասանութիւն մը, զոր ձօնած է՝ իրեն համակիր և զող Գրիգոր Ս. Օտեանի՝ հետեւեալ ոտանաւորով.

Առ Վսեմափայլ Գրիգոր էֆ. Օտեան
Ուղերձ

Որ զտարագիրքն Կալլիոպ ի հովասուն մայրեաց Գողթան,
Առ քեզ ժողովեցեր հովանացեալ նմա հանճարովդ,
Հարելոյս ի նորին գեղ իբր շնչեցեր եռանդն հրակէզ,
Ի ժպիտ նորին բերկրի և յարատուս նորա սրգալ,
Մեկենաս, ինձ երանի թէ զապաշնորհս ընկայցիս ձօն,
Եւ անգոր ձայնի քնարիս անմահութեան ծարուելոյ
Լիցի թե երկնապաց՝ վսեմականն Գրիգոր Օտեան:

Որուն ի պատասխան հետեւեալ նամակը գրած է Օտեան.

Ազնիւ էֆէնտի

Ձեր գրած ճարտասանութեան դասագիրքը կարգայի, փոքրիկ գրքոյկ մը որ մեծ և հզօր րանի մը վրա կը ճառէ:— Մարդս ի լնութիւնէ ուրիշ զէնք չունի, այլ միայն խօսքը — ով որ այս զէնքը գործածելու եղանակը կը սորվեցնէ՝ մարդոյ փրկութեանը կ'օգնէ:

Ձեր սու իս բրած ուղերձը կը պատուէ զիս և կը յուզէ միանգամայն: Ձեր սրբաին նուէրն է այն զոր շնորհակալութեամբ կ'ընդունիմ սուանց փնտաւելու թէ ինչ արժանիք ունիմ այդպիսի պատուս մը, զի ինչ որ չեմ, զայն տեսնել կուտայ յիս ձեր սէրը: Երանի ինձի եթէ այդ ձեր բոլոր պատրանքը իմ վրաս խականայ որ մը...

Գ. Ս. ՕՏԵԱՆ

25 Մայիս 1869
Կ. ՊՈԼԻՍ

Պատրաստած է նաև Ծաղիկ արդի Հայ մատենագրութեան անունով 2 հատոր գրական հատընտիր գրութիւններու հաւաքածոներ, ո-

րոնք իբր դասագիրք գործածուած են, ինչպէս նաև պատրաստած է ուրիշ մի քանի դասագրքեր ալ, իսկ թարգմանած է ամուսնական առողջապահութիւն Օնանու մեղիք, Տնական բժիշկ ևն:

Գրած է երկու թատերգութիւններ, «Վարդան» և «Աղասի», որոնք ներկայացուած են քանի քանի անգամներ բայց տպուած չըլլալով՝ բոլորովին կորսուած են: Թերթերու մէջ գրած յօդուածներն մեծաւ մասամբ քննադատութիւններ են ազգ. կեանքի վրայ: Ունի նաև տետրակի ձեւով հրատարակուած «Պարսկական նամակակնի» (2 տետր) իսկ իր մահուընէ վերջ հրատարակուած է Բնական Պատմ. Արշակ Բ. ի եւ անոր Պապ որդոյն» գործը:



320.— Եղիազար Մուրատեան

Իր երկատասարդութեան տարիքին մէջ գրած քերթուածները զանազան թերթերու մէջ հրատարակուած են, բայց ունի նաև իր կեանքի վերջերք գրած բաւական անտիպ ոտանաւորներ որոնցմէ նմոյշ մը հաս կը զետեղենք:

Ուղերսր

Ա՛լ հանդչիմ սակաւ մի ահա տօթ մեղաւոր Տոջորէ զճակատս գողգոջն և ծունկեր, Դեռ երկար գիշերոյ քուն չառած չեմ ուղերձ Եանուշ մրափ հրաւիրէ այս ազրեր վճիտ ջուր: Ո՛ւր մնաց յոյս, ծիծաղ, սէր՝ երա՞զք մանկական, Ա՛հ, ի զուր կսպասեմ որ անոնք ալ հասնին, Վաղուց իսկ մի առ մի պարտաստած կանգ առին:

Ու մինակ մուրաժ ես կերթամ այս ճամբան : Մի՛ վախնար , իշխաննե՛ր ունիս հոն քեզ ընկեր :
 Վո՛ւհ , վո՛ւհ , կեանք՝ խարուսիկ երազ է բնութեան . Մոլեռանդ հայրենասէր մը կզամ է միշտ և
 Ուր մեր խօլ միտք մուրը կը վնասուէ զո՞մ Աստուած՝ յարգամ ու պաշտպանամ է՝ Ազգային Եկեղեցին
 Սին տիպար իւր ցնորից բիւր մարմին զգեցամ , իբր Հայ Ազգի գոյութեան կապը , պայմանը ,

Ի Գոյնէս 1862 թուով ձեռքը շնորհաբար անցանք
 վերջին ոչախտն Ս. Գրիգոր վարդապետ , հայրս զիս լորս յարուսեալ
 հայրս խորհարար , և զսա չարս Եկեղեցի վարդապետ շնորհաբար
 յարար զիս վարդապետ շնորհաբար խորհարար շնորհաբար շնորհաբար
 հայրս վարդապետ :

Ստանալով իմ շնորհագրս
 Կ. Ստամբուլ
 Գրիգոր Վարդապետ
 Ստանալով իմ շնորհագրս
 Կ. Ստամբուլ
 Գրիգոր Վարդապետ
 Ստանալով իմ շնորհագրս
 Կ. Ստամբուլ
 Գրիգոր Վարդապետ
 Ստանալով իմ շնորհագրս
 Կ. Ստամբուլ
 Գրիգոր Վարդապետ
 Ստանալով իմ շնորհագրս
 Կ. Ստամբուլ
 Գրիգոր Վարդապետ
 Ստանալով իմ շնորհագրս
 Կ. Ստամբուլ
 Գրիգոր Վարդապետ



Ի Յուստանս Գրիգոր
 Մեծաբն
 Գրիգոր Վարդապետ

321.— Եղիազար Մուրաճեանի վկայագիրը

Իբր պատճառ աղէտից կամ խարիսխ փրկութեան : նոյնիսկ իր գրութիւններէն միոյն մէջ ըսած է
 Տես՝ սա վարդ յիւր ծղօտ և փափկիկ մանուշակ թէ Հայաստանեայց Եկեղեցիէն դուրս չկայ հայու-
 Դեռ երէկ թագուհի երանգաց և գեղոյ , րիւն :
 Արդ կոխան են ոտից՝ կերակուր կամ մրջնոյ 1880ին բռնապետական ուժիմը իր գրած
 Հարց , ո՛ւր է ձեր վառ գոյն և բուրումն անուշակ : հայրենասիրական մէկ քանի ոտանաւորներու
 Ա՛լ քալէ , ել քալէ երեկոյ է եղեր , համար զինքը ձերբակալել ուղղելով՝ Ռուսմանիա
 Արեգակն է տժգոյն և մարգերն են թօշնամ , փախաւ՝ Ռ . Յ . Պէրպէրեանի հետ միասին , և քիչ
 Սա խոնարհ հիւղին մէջ խշտեակդ է պատրաստած , յետոյ իբր ուսմանահպատակ վերադարձաւ :
 Օտեան և Պէշիկթաշլեան՝ իրեն համակրողներ

եղած են, իսկ Ստեփան փաշա Ասլանեան, Պէրպէրեան, Պարոնեան, Մ. Չերազ իր բարեկամներն:

Իր կեանքի վերջերը, աշխատած է նաև Անգլիերէնի՝ ու գրադած Պայրընի child Haroldով: Ֆրանսացի բանաստեղծներու մէջ մասնաւոր սէր մը ունէր Լումառզինի և Վիքթոր-Հիւկոյի:

Մեռած է 1891 Սեպտ. 4/16 ին ի Բերա, գրեթէ 50 տարեկան հասակին մէջ:

Ահաւասիկ իր դագաղին վրայ Ռ. Յ. Պէրպէրեանի խօսած դամբանականը:

«Եղբարք, աննշան ոք չէր այն՝ որոյ դագաղին շուրջը ժողովելու դժբաղդութիւնն ունինք այսօր: Նա մին էր այն ազգային ուսուցչական մարմնոյն կարողագոյն անդամներէն: Նա խորհող մ'էր, նա գրող մ'էր:

Եղիազար Մուրատեան, Ս. Փրկչեան ձեմարանի պանդուխտ սան և մին անդրանիկներէն էր այն աշակերտաց որք անմոռանալի Ստեփան Փափաղեանին տաք շունչին տակ հրահանգուեցան: Կանուխ — շուրջ երեսուն տարիներ յառաջ մտած էր ուսուցչական ասպարէզի մէջ, իբրև դասախօս Հայ և Ֆրանսերէն լեզուաց ու գրագիտութեան: Այդ ասպարէզի մէջ շուտով նա ստացաւ պատիւ ու համբաւ և մայրաքաղաքիս ազգային նշանաւոր վարժարաններէն բազումք բացուեցան իւր առջև, իրեն խնամոց յանձնելով իւրեանց բարձրագոյն կարգաց դրական ու լեզուագիտական կրթութիւնը: Ընդ երկար նա դասախօսեց Գուգկուհնճուգի, Պէշիկթաշի, Օրթագիւղի, Իւսկիւտարի, և Բերայի վարժարանաց մէջ, երկսեռ ուսանողաց, որոնցմէ ելան շատեր՝ նշանաւոր այսօր իրենց կարողութեամբն, Հայ ու Գաղղիական գրապիտութեանց մէջ: Հիմնեց նա անկախ վարժարան յԻւսկիւտար և ի Բերայ և վարեց մի քանի տարիներ:

Սովորական ուսուցիչ մը չէր, կողմնակալ, անյառաջադէմ, հնուց բացուած բազմակոխ ճամբաներէ քալող աւանդամուլ, ո՛չ, ընդհակառակն իւր հմտութիւնը դարգացուցած էր նա շարունակ, ուսմանց մէջ նա կը ներկայացնէր վերանորոգման, կատարելագործութեան ոգին, վկայ են իւր դասագրքերն, հին ճարտասանութեանց դէմ կը կանգնէր իւր գրագիտութիւնը, Լարսալի աւանդական քերականութեան տեղ կը դնէր հայացեալ «Լառուսը», աշխարհաբարի ուսման համար կ'ընծայէր ուսուցչին և ու-

սանողին, «Ծաղիկն» արդի Հայ գրականութեան: Հետամուտ էր իւր արուեստի տեսականին, աեղեակ մանկավարժական սկզբանց՝ որոց կը վկային իւր դասագրոց հմտալից յառաջարանք: Իւր սիրելագոյն ընթերցումներէն մին էր Սրէնսըրի դաստիարակութեան գիրքը: Ստրկական հաւաքիչ մը, ընդօրինակող մը չէր իւր դասագրոց հեղինակութեանց մէջ, իւր հաւաքածոյն իսկ, իւր «Ծաղիկ»ներն ինքնաբոյր բան մ'ունին, անձնական տիպ մը՝ դրօշմ մը՝ զոր կուտայ անոնց իւր ուրոյն ծանօթութեամբք ու բացատրութեամբք:

Այո՛, քննադատ մ'էր, ու խիստ քննադատ

*Եւ զիս զայսպէս էր ազատեալ
չու՝ վարժարանս շուրջում
հեղուեալ*

*Մէջ իջնալուստի շունչու եղբի
խաւքի՛ մոյշ մոխրի լոյս շեմեր
մեղք*

*Կ'էր մի Իրազ յայտէր
ճարտի միջ
Ընդաշարքս արեւի շրոյմուց
Իւրէն*

*Եւ իր Իրազս իր թոյն
Վե՛ր լոյս բաւաւ լոյս իւր
կ'աւարտեց իւր շրջ*

322.— Եղիազար Մուրատեանի ձեռագիրը

մը, և իբրև գրող՝ այս եղած է մանաւանդ իւր պաշտօնը: Իբրև գրական քննադատ մը, նա ունէր գրագիտական ճոխ հմտութիւն ազգային և օտարազգի մատենագրութեան և կիրթ ճաշակ՝ կարող ընտրելու գեղեցիկն ու ազեղը, օգտակարն ու անպիտանն: — Քննադատ մ'էր նաև ազգային կենաց շրջանակի մէջ, և անաչառ, անողոք, մինչևեւ դուրս իսկ վաղել երբեմն այն սահմաններէն զօրս կը դժեն առ մեզ քննադատին առջև ընկերային պատշաճութիւնք ու նախապաշարմունք և այսու շատ անգամ յինքն գրաւեց նա հոգաբարձութեանց զայրոյթն ու ատելութիւնը և հակառակ իւր անվիճելի կարողութեան՝ կորոյս յաճախ իւր դասախօսական բեմերը, մատ' ունելով, մանաւանդ վերջին տարիներս կարօտութեան իսկ:—

Բայց իւր «Պարսկական նամակներէ» մի քանիք պիտի մնան միշտ վկայ իւր անկողմնակալ, արդարասէր, անկախ ու սէգ ոգւոյն, որպէս և օրինակ հզօր, սրամիտ, յստակամիտ, կորովալից քննադատութեան :

Գիտեմք, իւր քննասէր և խուզարկու ոգին այնպիսի նիւթ մը եւս ընտրեց որ կը պահանջէ խոր պատմական աղբերց հմտութիւն և որ սակաւուց և եթ մատչելի է : Եղիազար Մուրատեան Իզմիրեանց կտակի Յանձնաժողովոյն մատոյց պատմական քննական գործ մը, մեր պատմութեան ամենէն շահեկան ժամանակներէն և դէմքերէն միոյն վրայ, գործ որ ձեռնհաս քննիչի մը — Մարկոս Աղաբէկեանի — հաւանութեանն էր արժանացած և զոր մամլոյ յանձնելու փափաքն, աւա՛ղ, չկարողացաւ գոհացնել ի կենդանութեան :

Եղիազար Մուրատեանի մէջ կար քերթող մը . իւր գրական կենաց առաջին շրջանին մէջ նա գրած էր խանդոտ քերթուածներ, որոնք Պէշիքթաշլեանի և Օտեանի ուշադրութիւնն ու համակրանքն ձգած էին երիտասարդ, գրեթէ պատանի գրագէտին վրայ և միշտ իւր արձակն ունէր փայլ մը քերթողական, թուիչ մ'երեւակայութեան :

Տակաւ Մուրատեան հակեցաւ յիմաստասիրութեան, նա ման աւանդ յիմաստասիրութեան բնութեան, գործարանաւոր ու անդործարան նիւթոյն : Տարվին և Պիսիսներ եղան վերջին սիրելագոյն ուսուցիչքն այս ուսուցչին որ ամեն լաւ ուսուցչաց պէս սիրեց ցվերջ լլալ միանգամայն ուսանող մը : Նիւթադաշտ մ'եղաւ նա դժբաղդարար, մտածութիւն և զգացում վերագրելով նիւթոյն, թերեւս համաստուածեան մը՝ տիեզերաց մէջ տանելով միանգամայն զա՛յն որ կը շարժի և զայն որ կը շարժէ — Այլ անկեղծ համոզումներ միշտ յարգելի չե՛ն, ո՛րքան և ուղղափառ շլինին կամ չերեւին անոնք : Ինչ որ ալ լինի, Եղիազար Մուրատեան խորհող

մ'եղաւ իմաստասէր միտք մը . իւր առօրեան գործէն յաճախ վեր կ'առնուր իւր մտածութիւնը և կ'ուղղէր զայն յաւիտենութեան խորոց մէջ, ճգնելով իւր մտաց լուսով թափանցել խաւարն որ կը ծածկէ սկիզբն ու վախճանը, — տկար ճիգն, լոյս աղօտ, բայց որ կը յայտնէ մեծ մտքերը, ազնուական՝ բարձր ոգիները :

Կարող և յառաջդիմական ուսուցիչ, դասգիր, քննադատ, քերթող — իմաստասէր, անտինչ որ եղաւ Եղիազար Մուրատեան : Եղաւ և հայր ընտանեաց, ունեցաւ մի ուստր և մի դուստր, մանչն ըրաւ ընտիր գերմանագէտ մը, աղջիկն ընտիր դաշնակահար — արուեստագէտ : Ընտանեկան ազգային, դասախօսական և գրական ասպարէզներու մէջ աշխատեցաւ անդուլ, արտադրեց, լաւագոյնն իրականացնելու տինչն ունեցաւ, արդիւնալից կեանք մ'ապրեցաւ : Վայելեց — շատ քիչ — պտուղն իւր ճգանց, անողոք հիւանդութիւնն կը շարժարէր զինքն երկար ատենէ ի վեր, ազքատութիւնը իւր տանջանքն աւելցուց այդ շարժարանաց վրայ . իւր անկեղծութիւնն ալ, ծայրայեղ դիւրադրգութեամբ որում յաճախ կուտար բուռն բացարուծութիւն, իւր մասն ունեցաւ իւր դժբաղդութեանց մէջ — Իւր աղջկան նորածին փառքն ու անոր դաշնակահան նուագն եղաւ իւր սառսպալից վերջին նեղ օրերուն միակ սփոփն : Այժմ ալ չի կրեր, իւր հոգին զերծ է մարմնոյն շղթաներէն ու պէտքերէն, զերծ էակ նիւթոյն կեղեկն, պայծառագոյն կը տեսնէ այժմ գաղտնիքն էութեան, որ անհանգիստ կընէր զինքն, մարմնոյ և մտքի տանջանքն դադրեցան իւր համար, կը հանդի վաստակեալն, օրհնեալ ըլլայ իւր յիշատակն . —

Ի . Յ . ՊԷՐՊԷՐԵԱՆ

5 Սեպտ 1891

Կ . Պոլիս

ԱՂԲԻԻՐՆԵՐ . 1891 և Արևելք եւ Արևելեան մարտը . — Դաւթբանակի Պերպիտակի եւ իր գալիկն Ա . Մարտեանէ :



ՄԱՏԱԹԻԱ Ա. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

1820-1903

Ա. Մ. Գարագաշեան ծնաւ 1820ին և մկրտուեցաւ Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ :

Իր նախնական կրթութիւնը ստացաւ սոյն Եկեղեցւոյ մօտ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան վարժարանին մէջ : Վերակացուները Անտոնի ուշիմութիւնը տեսնելով 1832ին Վիեննայի վանքը կը զրկեն ուսմունքը կատարելագործելու և կղերականութեան պատրաստուելու համար :

1840 նոյ. 1 ին Անտոն կղերական սքեմը հազնելով կոչուեցաւ Հ. Մատաթիա՝ և 1840—48 ին վանքին մէջ իբր մասակարար և դպրոցին մէջ իբր ճարտասանութեան ուսուցիչ պաշտօնավարեց :

1841ին Հ. Գաթրճեանի աշխատակցութեամբ Ոսկեդարեան գրարաւով թարգմանեց և հրատարակեց Բոսիւէի «Discours sur L'histoire Universele» :

Ժողովրդին մէջ ուսման ու գիտութեան եռանդն արծարծելու նպատակաւ 1843 Յունվար 25ին Վիեննայի մէջ կը յիմնուի Արամեան ընկերութիւնը, որուն հիմնադիրներէն կ'ըլլայ նաև Հ. Մատաթիա՝ Յովնանեանի, Տէրտէրեանի, Սպինեանի եւն. ի նետ :

1843 Մարտ 14 ին Հ. Մատաթիա Վիեննայի համալսարանը կը զրկուի Բնական Պատմութեան դասընթացքին նստեւելու համար :

1848 Յունիս 7ին Չմբուսիա կ'երթայ Աստուածասուր Ջուղի հետ, հոն տեղի վանական դպրոցը պաշտօնավարելու համար :


1849 Յուլիս 17ին Աբրահամի մտնութիւնը կը ստանայ Պոլիս վերադառնալու և երբ անգամ մը իր ծննդավայրը ոտք կը կոխէ, ալ կը մնայ : Իր հայրը արդէն մեռած էր և երբ մայրն ալ կը մեռնի իր անչափահաս քոյրերուն չոգը բ՛լտրովին իր վրայ կը ծանրանայ :

1856 ին կղերականութիւնը վրայէն կը թոթուէ, իր նոր գաղափարներուն և համոզումներուն համաձայն չգտնելով զայն :

Վարդապետութիւնը ձգելէն ետք Գարագաշեան մեծ համբաւ կը ստանայ իբրև քաջ հայկաբան, և Մայրաքաղաքին մեծ ուսումնարաններուն մէջ իբր հայկաբան կը դասախօսէ, մասնաւորապէս Խառնեղի Ս. Ներսէսեան վարժարանին մէջ :

Կայսերական լիւէի մէջ ալ պաշտօնավարած է իբրև հայկաբան 1878—80ին :

1886—92 Ազգ. Կեդր. Վարժարանի բարձրագոյն Դ. և Յ. դասարաններու Հայերէն լեզուի ուսուցչութեան պաշտօնը կը ստանձնէ :



323.— Մատաթիա Ա. Գարագաշեան

Գրաբարի ու Աշխարհարարի յուզուած կրկարատե պայքարին մէջ Գարագաշեան ի նպատակարարի մեծ դեր կատարած է իր յօդուածներով, կարեւոր են նաև Մատաթի մէջ Ազգային-Կրօնական ինդիքներու վրայ յայտնած իր կարծիքները :

1859ին Պէշիկթաշի մէջ Հրատարակչական ընկերութիւն մը կը կազմուի Մարգարեան Յարութիւնի թելադրութեամբ և Գարագաշեանին

կ'առաջարկեն դասագիրքեր պատրաստել : Այդ թուականէն սկսեալ Գարագոշեան պատրաստած է բաղմամբիւ դասագիրքեր (տես իր հեղինակութեանց ցուցակը) : Գարագոշեան իր բաժինը ունեցած է նաև հայ լրագրութեան մէջ և

ՃԱՇԱԿ

ՈՍԿԵՂԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՅԼՈՎԲՆ ՀԱՆԴԵՐԶ

ՀՆԴ ԽՆԱՄՈՎ

Ա. ՄԱՅԱԹԻԱՅ ԳԱՐԱԳՈՅԵԱՆ ԵՒ Յ. ԳՈՒՐԳԵՆԻ

Հ Ա Տ Ո Ր Ա .

معرف نظارت جليله سنك ۹۱۰ نومروى رخصتنامه سيلاه طبع اولتمشدر



Ի Կ. ՊՈԼԻՍ

ԱՌ ՅՈՎԱԾԵՓԱՅ ԳԱՎԱՅԵԱՆ

1887

324.— Ճաշակ ոսկեղէն դպրութեան

1886 ին Յ. Գուրգէնի ընկերութեամբ հրատարակած է Ճաշակ ոսկեղէն դպրութեան անունով գրարաւ ամսագիրք մը (տես թիւ 324) : Իր կեանքին վերջին օրերը ծեր ու հիւանդ էր, իր բոլոր գիտակցութիւնը կորուսած, ու ոչինչ մնացած էր իր փայլուն օրերէն : Մեռաւ այդ վիճակին մէջ 1903 ին :

Իր հեղինակութիւնները .

- 1841. Բոսուեսայ խօսք վասն պատմութեան (թրգմ.)—
- 1842. Ռակինեայ երգք (թրգմ.)—
- 1844. Ճարտարախօսութեան արուեստ.—
- 1845. Նկարագիր ուսմանց.—

- 1861. Լուծումն Քերականական և Ծաղկաքաղ .
- 1862. 1865, 1868, 78, 81, 83, 86, 88, 91 Դպրութիւն կամ Նոր Քերականութիւն .—
- 1864. Կրթութիւն Հայերէն Քերականութեան .—
- 1866. 1876, 1881, 1887, 1891, Հատընտիր Քաղուածք .—
- 1868, 1882, Օրէնտորֆ Ֆրանսերէն լեզուի .—
- 1868, Սկզբունք քերականական և արամաբանական վերլուծումի .—
- 1868, Համառօտ Պատմ. Փիլիսոփայութեան .—
- 1868, Համառօտ Փիլիսոփայութիւն .—
- 1869. 1870, 71, 72, 75, 78, 79, 83, 85, 88, 90, 91, 92 Համառօտ Նոր Քերականութիւն Գրարար Լեզուի .—
- 1870. Դաստիարակութիւն Մարց է. Մարթէն Ա. Հատոր .—
- 1870. 74, 79, 80, 81, 82, 85, 87, 90, 93 Գործնական Քերականութիւն .—
- 1871. 1874, Բանալի Գործնական Քերականութեան .—
- 1871.— Դաստիարակութիւն մանկանց .—
- 1872. 1883, Բանալի Հայ-Գաղղ. Քերականութեան .—
- 1873. 1879, 1882, 85, 88 Պատմ. Ս. Գրոց .—
- 1880. 1895 Քննական Պատմ. Հայոց .—
- 1880. 84, 89, Պատկ. Աշխարհագրութիւն Քաղ, ուսմն. բնական 1872, 92, 66, 81, 91 1880. 1883, 88 Սկզբունք Հայ Քերականութեան .—
- 1888. 90, 91 Քերականութիւն Աշխարհաբար լեզուի .—
- 1888. Պատմութիւն Հայոց .—
- 1887. 88 Ճաշակ ոսկեղէն դպրութեան (ամսօրեայ հանդէս) .— (Յ. Գուրգէնի հետ) Ա. Տարի 1886 (12 թիւ) Բ. տարի 1887 (12 թիւ) Գ. տարի 88 (1 թիւ) .—
- 1887. Փոքրիկ Քարտուղար կամ նամականի .—
- 1891. 95 Արմենակ կամ նոր Ընթերցարան .—
- 1891. Արձագանք Փարիզի .—
- 1893. Խորէն Ընթերցարան .—
- 1894. Առակք Լաֆոնդէնի .—
- ԱՂԲԻԻՐՆԵՐ .— Բիւրակն 1899 էջ 421, 532 եւ 1900 էջ 164.— Իր հեղինակութիւնները եւն .—

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՎՐԴ. ԶԱՄՉԵԱՆ

1738 - 1823

Միքայել Զամչեան ծնած է Պոլսոյ մէջ 1738 Դեկտեմբեր 4 ին և զաւակն է Արքահամ Զամչեանի, որ անուանի ոսկերիչ մըն էր: Պատանին Միքայել մտքով յաջողակ ու սրամիտ, Միքայել Չէլէպի Տիւզեանի ձեռքով արքունի ոսկերչութեան արուեստին մէջ մտաւ, ուր այնչափ յառաջդիմութիւն ցոյց տուաւ որ Չէլէպին կը խորհէր իրեն փեսայ ընել զինքը:

Միքայել սակայն կը փափաքէր եկեղեցական սքեմը հագնիլ ու 23 տարեկան էր երբ ուղեւորեցաւ Վենետիկ Միսիթարեան վանքը 1760 թուին, ուր կը գտնուէր նաև իր երէց եղբայրը Յակոբոս Վ. Զամչեան:

Միքայել՝ Կարապետ Վ. Մարտիրոսեանէ ստացաւ իր մտաւորական պաշարը: 1762 Մարտ 2ին ստացաւ Արքահայր Ստեփաննոս Մելքոնեանէ վարդապետական դաւազանը և զրկուեցաւ Արեւելք Հալէպէն մինչև Պասրա: Զամչեան հրապարակաւ կը քարոզէր Կարմեղականաց Լատին կրօնաւորաց եկեղեցւոյն մէջ, Կաթոլիկ եկեղեցւոյ ջատագովականը ընելով որով շատերը դարձան Հռոմէական եկեղեցւոյ գիրկը: Նոյն ժամանակներն էր որ չորս հատոր գրքեր պատրաստեց ընդդէմ Հայոց Յակոբ Պատրիարք Նալեանի գրութեանց ուր կը խօսուէր կարգ մը դաւանաբանական խնդրոց վրայ:

1773 ին մեծ ժանտախտի ատեն երբ բոլոր քահանայները վախճանեցան, ինք անոնց օգնութեան փութաց մարդասիրաբար, սակայն Լեւոն անուն մէկը Հռոմայ առջև ամբաստանեց զինքը թէ ժանտախտի ատեն թողած է իր հօտը և քաշուած, ասոր վրայ 1775 ին կանչուեցաւ Հռոմ ուր արդարացաւ և ընտրուեցաւ վերակացու նորընծաներու, պատրաստեց հին հայկաբանութեան հետեւութեամբ Քերականութիւնը գրաբառ լեզուին որ քանի մը դարերէ ի վեր խանգարուած էր. (այս քերականութիւնը ունեցաւ երեք տպագրութիւն 1779, 1801 և 1831 թուականներուն):

Ապա կը ձեռնարկէ Հայոց պատմութեան

ի սկզբանէ մինչև 1780 թուականը, մանրամասն ծանօթութիւններով, միջամուխ ըլլալով բոլոր Հայ և Օտարազգի պատմագրաց գրութիւններուն, թէև տեղ տեղ ժամանակագրական սխալներ և աղաւաղումներ ալ սպրդած են, սակայն, ինք հմուտ ըլլալով Լատին լեզուին, Յունարէնէ թարգմանուած պատմագիրները պրպտեց: Իր ջանքը եղած է միաբանել՝ անմիաբան պատմագիրները և ժամանակագիրները, անանկ որ Յովհաննէս Իմաստասէր Օձնեցի որ մինչև այն ատեն կաթոլի-



325.— Միքայել Վ. Զամչեան

կութեան հակառակորդ կը նկատուէր, ինք գուշակած է թէ հակառակորդ չէ ինչպէս որ վերջը գտնուած ձեռագրէ մը հաստատուած է: Այս պատճառաւ թշնամիներ ունեցաւ իր դէմ որով շատ հալածանքներու ենթարկուեցաւ: Իր դաստիարակչական պաշտօնը աւարտելով ճամբորդեց Գերմանիա և Աւստրիա և ժամանակ մը մնաց Հայոց քաղաքը Վարատին ամրոցին մէջ և ապա 1790 ին Դրանսիոյ Եղիսարէթուպոլսոյ

վանքը զրկուեցաւ իբր այցելու հովիւ : Երկրորդ տարին նորէն վերադարձաւ Վենետիկ ուր ձեռնարկեց գրել Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի, այլ և այլ մեկնարաններէ օգտուելով (12 հատոր տպեալ 1815):

1795ին գարձեալ զրկուեցաւ Պոլիս քարոզչութեան համար, ինն աւարտեց Սաղմոսի մեկնարանութիւնը հարցափորձելով նաև Հրեայ Բարունապետներն, այդ միջոցին ինք սովորած էր նաև Եբրայերէն լեզուն:

Պոլսոյ մէջ երկար տարիներ մնաց և վախճանեցաւ 1823 Նոյեմբեր 30ին. թաղուեցաւ Բնրայի Հին գերեզմանատան մէջ:

Յրանսական բազմահատոր յատուկ անուանց բառարանին մէջ տպեալ ի Փարիզ, կայ իր կենսագրականը, այդ տեղ գրուած է թէ նոյն կենսագրականը հաւաքուած է Գաղղիոյ Ասիական

ընկերութեան Օրագրութեան 4րդ տարւոյ տետրակէն, բայց Հ. Մաղաքեան կը գրէ իր Երեւելի Երանց բառարանին մէջ թէ այդ տեղեկութիւնները իրեն թշնամի վարդապետներէն մին սուած է և պատմական մեծամեծ վրիպակներ կան: Մենք չտեսանք դժբաղդարար սոյն բառարանը:

Իր հեղինակութիւններն՝ Պատմութիւն Հայոց 3 հատոր. — Խրատման պատմութեան Հայոց. — Քերականութիւն Հայերէն — Մեկնութիւն Սաղմոսաց (12 հատոր). — Նուագարան Օրհնութեանց. — Սեղան խնկոց. — Պատկեր Տօնից Ս. Աստուածածնի. — Հրահանգ Եօթնեկի:

ԱՂԲԻԻՐՆԵՐ. — Յիշատակ Մխիթրաբեան Լեւհարիւրաբեայ Յորեղեանի. — Բառարան Երեւելի Արահց. —

Յ Ա Կ Ո Ր Կ Ա Ր Ի Ն Ե Ա Ն Ց

Յակոբ վարժապետ Կարինեանց Կարնէն Կովկաս գաղթած էր 1829ին Ռուս-Թրքական պատերազմի ժամանակ և այդ պատճառաւ մինչև վերջ յիշուած է Կարնոյ գաղթական Յակոբ Վարժապետ անուանով: Իր ծննդեան տեղանիւր անձանոք կը մնայ: 1837—1847 թուականներուն իր գանձեք զինքը իբր ներկայիս Գաղղիոյ ուսուցիչ: Իր գիրքը հետզհետեւ կ'աւելնայ և գերիշխող դեր մը կը սկսի կատարել վարժարանին մէջ: Նոյն թուականներուն քարտուղար էր Կանտիստորի: Սակայն վարժարանն իր վարչութեան տակ կը ստանայ աւելի յոսի ուղղութիւն մը մինչև որ 1847ին քոլէրայի սրտաճառաւ նորի մը կը փակուի վարժարանը և 1848ին Ներսէսի Կախովիկոս բնարուելովը նոր ուժ և ուղղութիւն կը ստանայ:

1846 թուականին երբ իշխան Վարսնց վր Կովկասի կոնավարչ պետ նշան կուեցուցուց, երկիրը նոր փոփոխութիւն կրեց, հողիւ թէ նա Տփլիս կը մտնէ, կը ձեռնարկէ հրատարակել «Կովկաս» անուն շաբաթաթերթ մը Ռուսերէն, Հայերէն, Վրացերէն և Թուրքերէն լեզուներով: Հայերէն մասը «Կովկաս» անունով հրա-



326.— Յակոբ Կարինեանց տարակուիլ սկսած է 1846 Յունվար 12ին իբր շաբաթաթերթ (տես թիւ 327) Կոստանդինովի

1846ին Կովկաս ունէր 138 բաժանորդ իսկ 1847ին՝ 192 . մէկ տարուան մէջ աշխատակցած են միայն 45 անձեր որոնց 6ը վարժապետ քահանայ և սարկաւազ :

1848 Սեպտեմբերին Կովկաս դադրեցաւ մինչդեռ Ռուսերէն Կովկաս ցարդ կը հրատարակուի :

Կովկաս Ռուսահայոց մէջ լրագրութեան դադարը ծնաւ և եռանդը արծարծեց ու անոր փակումէն երկու տարի ետքն է որ «Արարատ» սկսաւ հրատարակուիլ գրեթէ՝ իբր շարունակութիւն Կովկասի , քանի որ Պատկանեան քահանան ալ դեր ունէր Կովկասու խմբագրական մարմնին մէջ :

1851ին երբ Ներսէսեան վարժարանի տեսուչ Գարր . Քննչ . Պատկանեան հրաժարեցաւ , հոգաբարձութեան կողմէ առժամեայ տեսուչ անուանուեցան դպրոցի երկու աւագ վարժապետներն Յակոբ Կարինեանց և Միք . Պատկանեան , որոնք համակերպեցան առանց ոռճիկի վարել այդ պաշտօնը : Ասոնք խաղաղ կերպով կառավարեցին դպրոցը և պատրաստեցին նոր կանոնագրութիւն մը որով կարգապահութիւն և ուսուցման կանոնաւոր եղանակներ կը մտցնէին սակայն նոյն միջոցին տեսուչ անուանուեցաւ Պետրոս Շաշեանց և աւելի կատարեալ կերպով բարեկարգեց վարժարանը : Իսկ Կարենեանց շարունակեց իր աւագ ուսուցչի պաշտօնը :

Յակոբ Կարենեանց 1858ին Տփլիսի հոգեւոր դպրոցի տպագրատան մէջ կը տպագրէ քաղղասութիւն Պատկանեան Մովսիսի Խորենացոյ սպագրեոյն ի Վենետիկ ընդ երկուց ձեռագրաց : Իր այս երկասիրութեամբը Կարենեանց հիմը կը դնէ քննական ուսումնասիրութեան՝ ուշադրութիւն ընծայելով հին ձեռագիրներու բազմաթիւն . իր այս մտասուեւումը աւելի եւս յառաջ կը վարէ 1861ին երբ կ'այցելէ Էջմիածնայ ձեռագիրներու թանգարանը : Մտածէր Կաթողիկոսի արտօնութեամբ նախ կը ցուցադրէ Մայր Յուցակ անունով բոլոր ձեռագիրները և իր իսկ անձնականէն ընելով այդ մեծածաւալ գործին նիւթական ծախսը կը տպագրէ 1863ին դարձեալ Ներսէսեան Հոգեւոր դպրոցի տպագրատան մէջ՝ կարծես կանխագուշակելով այն անհամեմատ կարեւորութիւնը զորս պիտի ստանային տարիներ յետոյ գանձարաններու մէջ մթերուած այդ թանկագին ձեռագիրները :

Ի նկատ ունենալով Կարինեանցի այդ երկին

բացառիկ կարեւորութիւնը կարտատպենք հոս յառաջարանը :

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Որչափ առաւելաւ յազգի մերում տենչ ուսման , այնչափ առաւելան և պէտք կարեւոր գրեանց . բայց աւա՛ղ , Հայացի գրեանք թերեւս ըստ թուոյ յւրեանց , ենթարկեալ կորստական հնարից քրիստոնեայ և անքրիստոնեայ թշնամեաց , ներքնոց եւ արտաքնոց , եթէ ո՛չ իսպառ , դէ՛թ ըստ կիսոյ մասին մատնեցան ի հուր և ի ջուր , և բազումք եւս բասրելի իմն բարեպաշտութեամբ թաղեցան յերկրի . իսկ մնացեալքն ի նոցանէ պտհպանին յանկիւնս եկեղեցեաց և վանօրէից փոշոտեալ , գճգճեալ և ցեցակեր :

Ամենայն ուսումնականաց և բանասիրաց աչք , ի վաղուց հետէ յառեալ կային ի մատենադարան սրբոյ Աթոռոյն Էջմիածնի , իբրու կեդրոն ազգային հնութեանց և ի թանգարան ընտրելագոյն մատենից . բայց և այն չգիտեմ , ըստ դիպաց ժամանակին արդեօք . թէ ըստ անհոգութեան ժառանգաւորաց մեծի Աթոռոյն , կայր յողբալի վիճակի . մինչ զի ոչ միայն չունէր այն զձեւ և զկերպարան գրադարանի , այլ և չէր ի միջի ցուցակ մատենից պարունակելոց ի նմին : Եւ ուր չի՛ք կարգ , կանոն , հաշուապահ և հաշուապահանջ , անդ ամենայն ինչ վեր ի վայր ընթանայ , աւոգ չերեւի ի միջի կորուսան և կորուսանողն , գողօնն և գողն :

Ապացոյց բանիս կարեն լինել բազմաթիւ մատենաք , սփռեալք յամենայն վայրս . կրնքեալք վաւերականաւ մատենադարանի սրբոյ Աթոռոյն : Վաղուրեմն պարտէր ազգին հոգալ զայսմ կարեւոր առարկայէ , սակայն չէ՛ր ումեք փոյթ , մինչև ի 1860 ամի , ըստ հարկի իմն , յանձն եղեւ այն մատենադարան բազմավաստակ Գանիէլ վարդապետի , որոյ անձանձիր աշխատանօք և ձեռնասուութեամբ գործակցաց նորա , յընթացս մի և կէս ամի , հազիւ հազ ստացաւ այն զձեւ մատենադարանի :

Ի 1861 ամի յամսեանն Սեպտեմբերի գնացեալ իմ յէջմիածին , զկնի երկրպագելոյ սրբոյ տաճարին , երկրորդ ուխտատեղի իմ արարի զմատենադարանն , զորոյ տեսեալ զբարեկարգութիւն , բերկրապատար սրաիւ հազորդեցի զայն իմոց համազգեաց ի ձեռն «Կռուելի» անուանեալ օրագրին Տփլիսայ յամսեանն Մայիսի

1862 ամի ի միջի այլոց յերեսս 369, 372. գրե-
լով այսպէս .

«Յայտնեցի իմ ցանկութիւնս գրադարանը
տեսնելու վեհափառ Հայրապետին, որ իսկոյն
հրամայեց իմ բաղձանքս կատարել. գրադարա-
նապետ բաղձաճան Դանիէլ վարդապետը սպա-
սումէր մեզ գրատան մէջ: Մենք համբուրե-
ցինք վեհափառ Հայրապետի աջը և գնացինք
ազգի գլորման կամ կանգման օթարանը: Յի-
րաւի ասած է «Տեսութիւն աչաց հաւատարիմ
է, քան զլուր ականջաց». Հազար անգամ լսել
էինք էջմիածնի գրադարանի ողորմելի վիճակը,
մինչեւ որ ասում էին, թէ գրքերի միջումը
օձերը և կարիճները բուն են դրել. բայց ես բո-
լորովին ընդհակառակը տեսայ: Ուրեմն, Հա՛յեր,
այն արամած լուրերի վերայ ընդունեցէ՛ք ա-
ռաջին անգամ իմ աւետարանութիւնը:

Էջմիածնի գրադարանը, որ մի հոյակապ քա-
րուկիր շինութիւն է վեհարանին կալսմ, բա-
ժանուում է երկու մեծ դահլիճ, մաքուր և լու-
սաւոր պատուհաններով: Այն սենեակների մի-
ջումը: պատերի բարձրութեամբ, դասաւորած
են կարմիր փայտից շինած նոր և գեղեցիկ պա-
հարաններ (շկաֆ) իւրեանց կողպանքներով,
բոլոր գրեանքը դասաւորած են նոյն պահա-
րանների միջումը: Առաջին դահլիճումը, որ
կիսով չափ փոքր է երկրորդից, դասաւորած
են տպագիր գրեանքը, իսկ երկրորդի միջումը,
որ մեր ազգի հազուագիւտ գանձարանն է,
դասաւորած են ձեռագրերը: Մի քանի մեծա-
մեծ գրեանք գննեցի և չ'սեսայ բնաւ ո՛չ խո-
նաւութիւն և ո՛չ փոշի, թո՛ղ թէ օձ կամ կա-
րիճ: Գրեանքը մասնաւորապէս զննելուց յետոյ,
խնդրեցի ցոյց տալ ինձ գրեանց ցուցակը: Ան-
մուտց յիշատակաց արժանի մատենադարանա-
պետ Դանիէլ վարդապետը ցոյց տուեց ինձ նոր
շինած ցուցակը բաղկացած երկու հարիւրից
աւելի թաքաղայ թղթից: Քանի որ զննում էի
այն ցուցակը, այնքան ուրախութիւնս աւելա-
նում էր: Յուզակը շինած է այբբենական կարգաւ
մանրամասն տեղեկութեամբ, թէ ո՛ր ձեռագրի-
րը, ո՛ր դարումն է գրած, ո՛ւմ ձեռամբը, ի՛նչ
թղթի վրա, ո՛րպիսի յիշատակարան ունի, թերի՛
է թէ ամբողջ և այլ այսպիսի կարեւոր հանգա-
մանքներով: Ամէն մի ձեռագրի հանդէպի երեսի
վրա նշանակած է, թէ այն ձեռագրի հետ ի միա-
սին կազմած քանի՛ գրեանք կան: Մի Ազա-
թանգեղոս տեսայ՝ հին ցուցակումը նշանակած
է, մի Ազարակեղոս, որի հետ ի միասին կազմած

էին տասերեք այլեւայլ մատենադրաց գրուածք-
ներ: Այսպէս են գրելթէ. ձեռագիր դրեանց մեծ
մասը: Մի քանի ձեռագրերի համեմատութիւն-
քը ևս նշանակած են տպածների հետ, և դուրս
են բերել, թէ քանի՛ թերութիւնք ունին տըպ-
եալներն: Այս գրադարանի բարեկարգութեան
բաղձաճիղն աշխատութիւնը մի մարդոյ գործ
չէ և չի՛ կարող լինել: Վեհափառ կաթողիկոսը
անցեալ տարի այս թանգարանի բարեկարգու-
թիւնը յանձնել է մի առանձին մասնաժողովի
որոյ անդամքը եղել են՝ Անդրէաս վարդապետ
Վեհապետեան, Դանիէլ վարդապետ Շահնաղար-
եան, Սուքիաս վարդապետ, Յակովբ սարկաւազ
Սիւնեաց և պարոն Նիկողայոս տէր Յովսէփի-
եան: Վերոգրեալ արդիւնաշատ անձինքը վեհա-
փառ Հայրապետի յանձնարարութիւնը կատա-
րելուց յետոյ, թողել են նոյն կարգաւորու-
թիւնը շարունակելու և պահպանելու հոգսը
Դանիէլ վարդապետի և նորա օգնական Յակոբ
սարկաւազի վերայ: Իմ տեսած ձեռագիր գրե-
անց ցուցակը տակաւին սեւագիր էր: Դանիէլ
վարդապետից խնդրեցի, որ երբ պարզագրէ
ցուցակը, մի օրինակ ուղարկէ ինձ մօտ, և
խոստացայ նոյնը իմ ծախքով տպագրել տալ
ի տես ընդհանուր ազգի: Նա ուրախութեամբ
խոստացաւ կատարել իմ խնդիրը:»

Թերեւս յոյս տպագրութեամբ հանելոյ ի
լոյս զլատտակ իւր և եւս քաջալերեաց զԴա-
նիէլ վարդապետն, որ աւարտեալ զսրբագրու-
թիւն և զպարզագրութիւն ընդհանրական ցու-
ցակի ձեռագիր մատենից էջմիածնի, առաքեաց
զայն առ վեհափառ Հայրապետն ի Տփլիս այս-
օրինակ յայտարարութեամբ:

Ձերդ Սրբազնակատար Օծութիւն Աստուա-
ծընտիր Հայրապետ

Ամենագութ Տէր իմ .

Մատենադարանն Պատրիարքական Մայր Ա-
թոռոյ Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի ի բազում
ամաց հեռէ գոլով ի խառն դրութեան, զամե-
նայն զտեսողաց զսիրտս ճմլէր ի կարեկցութիւն,
մինչև վերնախնամ տեսչութիւնն այց արարնմա
բարերար հոգատարութեամբ Ձերդ Աստուածար-
եալ Քահանայապետութեան: Առաջին շնորհաբեր
այցելութեամբ Ձեր բաց նա զաչս իւր ի լոյս:
Իսկ երկրորդաւն և երրորդաւն ընկալաւ զբազ-
մաց փափաքելին զբարեկարգութիւն:

Իսկ ես, որպէս անարգ գործի և միջնորդ
հարկեալ ի բարձրագոյն հրամանէ ծայրագոյն
Հոգեւոր տերութեանդ իմոյ, համաձայն առա-

Չաղբուծեան Չերոյ և Լուսաւորչեան Հայոց Սիւնհոգոսի Սրբոյ Էջմիածնի, յանձին կալայ զայն ծանր և զգժուարակիր պարտաւորութիւն վերատեսչութեան յիշեալ մատենադարանին, և ըստ հրամանագրութեան Սիւնհոգոսին արձակելոյ առիս յ30 ն Սեպտեմբերի 1860 ամի համարաւ 1845, հիմնեցելոյ ի վերայ պատկառելի կոնդակի Չերոյ ի բարեկարգութիւն վերածի զնա, և զմի ամ և զվեց ամիս աշխատեալ օգնականութեամբ հոգեծին լաւակի Չեր Անդրէաս վարդապետի, և սմանց ուսումնասէր ժառանգաւորաց մեծի Աթոռոյս, կազմեցի զմայր ցուցակ ամենայն գրչեայ մատենից գտանեցելոց ի նմին, բաժանեալ զայնոսիկ ի զանազան նորախրատ ապակաւոր գզրոցս այրբենական կարգաւ: Զոր աւասիկ Չե'զ, Վեհափառ տէ'ր, իբնեւ առաջին բարերարի պարծանս վերագրելով յանձինս պատկառելի դիմօք ընդ ամին ընծայեմ և ամենահպատակօրէն մողթեմ քաղցր ակնարկութեամբ Չեր ընդունել ի հաճոյս բարերար կամաղդ զայս իմ դոյզն ծառայութիւն հոգեւոր տէրութեան Չերոյ, և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, և բարեհաճել ամենազորմածարար հրամայել հանել ի լոյս տպագրութեամբ:

Չերդ Վեհափառութեան
Ամենախոնարհ ծառայ

Դանիէլ Վարդապետ Դահնագարեանց Տարօնեցի:
Ի 10ն Յունվարի 1862 ամի.

Ի Սուրբ Էջմիածին:

Նորին Վեհափառ Օծութիւն, յետ հասու լինելոյ հաստատութեան իմոց մտաց ի կատարել զխոստումն իմ, զայն ձեռագիր ցուցակ յանձնեանց ինձ օրհնութիւնարեք կոնդակաւ իւրով, որ ունէր օրինակ զայս:

ՄԱՏԹԷՈՍ ԾՍՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՍՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵՍՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ:

Հարազատ որդւոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, Բարեճնունդ Յակովբայ վարժապետի Կարենեանց, Բրիտոսական սուրբ ողջունիւ ծանուցանեմք, զի ի կոչիլն մեր ի պաշտօն Հայրապետութեան Ազգի հայոց և ի մտա-

նելն մեր ի սուրբ Էջմիածին, տեսեալ զկարօտութիւն բարեկարգութեան Գրադարանին սրբոյ Էջմիածնի, որ մի է ի գլխաւոր և յամենահարուստ ճոխութեանց ընդհանուր Ազգիս, հոգմեծ յանձին կալաք ի բարեկարգութիւն նորա ի ձեռն յատկապէս յայն վսեմ գործ նշանակեալ անձանց, որք յրնթացս միոյ և կէս ամի հազիւ կարողացան բազմաջան աշխատութեամբ ամել ի կարգ զբազմաթիւ ձեռագիր և տպեալ մատեանս և զեանդել ի վայելուչ գզրոցս:

Ի 1861 ամի յամենան Սեպտեմբերի ի լինելն Չեր ի սուրբ Էջմիածին, դուք ինքնին ականատես եղեալ բարեկարգութեան այնր գրադարանի, սոզաօրարար իրախուսեալ զբազմաջան վերատեսուչ մատենադարանին սրբոյ Աթոռոյն զԴանիէլ վարդապետն Շահնագարեանց, խոստացեալ էիք ի պարզագրելն զընդարձակ ցուցակ մատենից այնր գրադարանի, առաքել առ Չեզ ի Տփլիս առ ի տպագրել զայն սեպհական ծախիւք Չերովք յօգուտ ուսումնարանի Աթոռոյն Էջմիածնի:

Դանիէլ վարդապետն ի սկզբան ներկայ ամի ներկայացոյց մեզ զլիակատար ցուցակ բոլոր մատենից եղելոց յայնր գրադարանի, և աւասիկ յանձնեմք Չեզ, քաջայոյս լինելով, թէ դուք համաձայն խոստման Չերոյ ունիք տալ տպագրել զայն առանց իրիք փոփոխութեան շարագրածոյն, իսկ զձեւ մատենին արասջի'ք ըստ Չերում խոհականութեան, և յետ տպագրութեան առաքելով առ մեզ զքանի մի հատորս, սպասեսջի'ք մերում տնօրէնութեան, վասն ի վաճառ հանելոյ զայնս յօգուտ Դպրոցի Սրբոյ Աթոռոյն ի ձեռն ո'ւմ հարկն է:

Այսպիսի Աստուածահաճոյ գործ Չեր ունի յաւերժացուցանել զյիշատակ Չեր յազգէ յազգ և յորդւոց յորդիս և պանծալի հանդիսացուցանել զԱզգասիրական եւանդն ոգւոյդ ի յառաջդիմութիւն ազգային զրականութեան, զոր յանկանալով յաւէտ տեսանել ի սիրելի Ազգիս:

Մնամ վասն երջանկութեան Բարեճնունդ սիրելութեանդ ազօթարար

Վշտալի ՄԱՏԹԷՈՍ Կաթողիկոս ամենայն Հայոց
Ի 29ն Մայիսի 1863 ամի. ՌՅԺԲ:

Ի Տփլիս

